ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 27-Ա

<<29>> փետրվարի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐԱ ԺՈՐԱՅԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՍՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, տրված՝ 2023-10-04, ծածկագիր՝ 2023VQKYYB և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Արա Ժորայի Հովսեփյանը, իր 2023 թվականի հոկտեմբերի 5-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված **31.17** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ ավտոտնակի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0034-0036 կադաստրային ծածկագրով **0,003117** հեկտար մակերեսով հողամասի (Վկայական 28122023-08-0048, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մ. Մադաթյան փողոց 15/7 ավտոտնակ) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 31.17 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ ավտոտնակի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0034-0036 կադաստրային ծածկագրով 0,003117 հեկտար մակերեսով հողամասը (Վկայական 28122023-08-0048, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մ. Մադաթյան փողոց 15/7 ավտոտնակ, Հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանք տրված՝ 2023-10-04, ծածկագիր՝ 2023VQKYYB) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի . վաճառքով **56 730 (հիսունվեց հազար յոթ հարյուր երեսուն)**

Հայաստանի Հանրապետության դրամ ընդհանուր արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Արա Ժորայի Հովսեփյանին /Նույնականացման քարտ 1801790068, տրված՝ 30.07.2018 թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, ք. Մարալիկ, Մ. Մադաթյան փողոց շենք 15, բն. 12):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ - 12	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<29>> փետրվարի 2024 թ.
քաղաք Մարալիկ